

Դպրոցականների հանրապետական օլիմպիադա

(2017-2018 ուստարի)

Հայ գրականություն

X դասարան (տևողությունը՝ 180ր.)

Սիրելի՛ մասնակից. հաղթիր՛, և հաղթանակդ նվիրի՛ր գալիք տոնակատարության հերոսներին, որոնց անձնուրաց հավատի ու խիզախության արդյունքում ունենք մեր չքնաղ հայրենիքը, շենացնենք և արժանի լինենք նրանց հետնորդը կոչվելու պատվին:

Սիրով և հավատով՝ Ս. Աբազյան

1. «Ասքանազյան ազգի և Հայաստան աշխարհի աստվածապարզ գրի մասին, թե ե՛րբ ու ո՛ր ժամանակ բաշխվեց և ի՛նչպիսի մարդու ձեռով եղավ այդ աստվածային նոր տրված շնորհքը, այլև այդ մարդու լուսավոր ուսման և հրեշտականման առաքինի կրոնավորության մասին..... »: Ո՞վ է այս տողերի հեղինակը և ո՞ւմ են բնութագրում: Այդ կերպարը բնութագրող որևէ քառատող գրի՛ր՝ նշելով հեղինակին: Ի՞նչ շրջասույթներով կբնութագրես այդ հանճարին: 5մ.

2. Ո՞վ էր այն հայրենապաշտ այրը, որ մեզ ընծայեց մեր իսկ ծննդյան վկայականը: Գրի՛ր այդ վկայականի ստեղծման ժամանակաշրջանի, հեղինակի, պատվիրատուի և մեզ ավանդած դասերի մասին: Հիշատակի՛ր մի քանի տող այդ վկայագրից: 5մ.

3. Ո՞վ է «Հայոց Մոլիերը». ուրիշ ի՞նչ պատվանուն-շրջասույթ գիտես նրա մասին: Այդ գրողի ո՞ր ստեղծագործությանն ես ծանոթ: Գրի՛ր կարծիքդ այդ ստեղծագործության հերոսների մասին(5-6): 5մ.

4. Րաֆֆու ո՞ր ստեղծագործություններն են դարձել հայ ժողովրդի ներշնչման աղբյուր՝ նախապատրաստելով ֆիդայական շարժումը:

Կարո՞ղ ես առնչություններ գտնել այն տոնի հետ, որը նշվելու է մայիսին. գրի՛ր կարծիքդ այդ խենթ նվիրյալների մասին: Ի՞նչ պատվանունով ենք մեծարում Րաֆֆուն: Գրի՛ր քառատող՝նվիրված այդ տոնին կամ հերոսներից որևէ մեկի մասին: 5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝

/Ս. Աբազյան/